ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 փ., հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

Կ 01/4561-10
26.11.2010թ.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝ Պարոն Ա. Սաքունցին

Ի պատասխան Ձեր 2010 թվականի նոյեմբերի 17-ի 10-38 թվակիր գրության

Հարգելի պարոն Սաքունց,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական խմբի հրատապ հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Առդիր «2» թերթ

Հարգանքով՝ *Գ. Դանիելյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 540/7-3269
«24» 11 2010 թ.

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարար
պարոն Գ.Դանիելյանին

Ի պատասխան Դիտորդական
խմբի 17.11.2010 թվականի
10-38 թվակիր հրատապ հաշվետվության

Հարգելի պարոն Դանիելյան

Հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ուսումնասիրվել են Դիտորդական խմբի հրատապ հաշվետվության մեջ նշված հանգամանքները, որոնց արդյունքում պարզվել է հետևյալը.

2010 թվականի նոյեմբերի 11-ին դատապարտյալ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ նույն օրը ժամը 02:50 սահմաններում հատուկ նշանակության ջոկատի զինվորների կողմից ինքը ենթարկվել է հարձակման, որի ընթացքում հարվածներ են հասցրել իրեն: Նույն օրը ժամը 03:20-ին «Կոշ» քրեակատարողական հիմնարկի հերթապահ մասում բժշկական սպասարկման բաժնի ծառայողի կողմից դատապարտյալ Ն.Փաշինյանը ենթարկվել է մարմնական զննության, որի արդյունքում արձանագրվել է, որ վերջինիս մարմնի վրա բռնության հետքեր չկան:

Ավելորդ չէ նշել, որ 11.11.2010 թվականին Դիտորդական խմբի անդամները (Թեմիկ Խալաֆյան և Լուսինե Հարությունյան՝ ժամը 6:30-9:20, 11:40-12:00) երկու անգամ հանդիպել են դատապարտյալ Ն.Փաշինյանին, սակայն նրա մարմնական վնասվածքների մասին ոչինչ չի արձանագրվել և հրապարակվել:

Նույն օրը դատապարտյալ Ն.Փաշինյանին հանդիպելու նպատակով «Կոշ» քրեակատարողական հիմնարկ են այցելել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցները, սակայն դատապարտյալը հրաժարվել է հանդիպել նրանց հետ:

Դատապարտյալ Ն.Փաշինյանին ս.թ. նոյեմբերի 11-ին երեք օր ժամանակով տրամադրվել է երկարատև տեսակցություն իր կնոջ հետ, որի ավարտից մեկ օր անց՝15.11.2010 թվականին Դիտորդական խմբի անդամները (Լաուրա Գասպարյան և Լուսինե Հարությունյան՝ ժամը 19:15-20:30) հանդիպել են դատապարտյալին և իբր «արձանագրել» մարմնական վնասվածքներ, որոնք ըստ դատապարտյալի առաջացել են «հայտնի դեպքերից ժամեր անց»:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որն անց է կացվել 11.11.2010 թվականին ժամը 13:30 -ի սահմաններում: Ըստ դատաբժշկական փորձագետի թիվ 253 եզրակացության

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարարություն
Մուտք 4650
«25» 11 2010 թ.

դատապարտյալ Ն.Փաշինյանի վրա առկա է եղել «ձախ դաստակի դիստալ ֆալանգի շրջանի քերծվածք, հասցվել է բութ առարկայով, որն առողջության քայքայման հատկանիշներ չի պարունակում»: Համաձայն «Կոշ» քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից կազմած արձանագրության, իրենց ներկայությամբ դատապարտյալ Ն.Փաշինյանն ինքն է պոկել իր մատի մաշկը և արյունը քսել հագուստին՝ասելով. «տեսեք ձեր գլխին ինչ եմ սարքելու, մեկ է՝ ինձ են հավատալու, ոչ թե ձեզ»:

Դատաբժշկական փորձագետն իր գրավոր բացատրության մեջ նշել է, որ փորձաքննության ժամանակ ուսումնասիրել է դատապարտյալի գործնականում ամբողջ մարմինը և բացի նշված վնասվածքից այլ վնասվածքներ չեն եղել: Փորձագետը բացառել է դատապարտյալի կողմից նշված ժամին մարմնական վնասվածքների ստացման պարագայում դրանք իր կողմից չնկատելու և չարձանագրելու հանգամանքը:

Նկատի ունենալով վերոգրյալ փաստերը, գտնում եմ, որ Հրատապ հաշվետվության մեջ նշված «փաստերն» իրականությանը չեն համապատասխանում:

Հարգանքով՝

Գեներալ-գնդապետ *Հ.Հարությունյան*